

ԳԷՈՐԳ ՀՆՁԱՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀԱԱՀ

ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՒ ԽՈՏԵԼԻ - ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆՄԱՔՈՒՐ ՍՆՈՒՆԴԸ ՏԱՐԲԵՐ ԱՄԱՆՈՑՈՆԵՐՈՒՄ ԵՒ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԻՍ ՀԱՅԱՐԿՈՒՄՆԵՐԸ¹

Վոգեւոր-կրօնական համակարգերում առանձնակի տեղ է ընձեռուած օրէնքներին, պատուիրաններին ու կանոններին, որոնց համապատասխանութեամբ ձեւաւորուում է հաւատացեալի առօրեան²: Այդ համակարգերը սահմանում են տարբեր ոլորտների վերաբերող սկզբունքներ, ընդհուպ մինչեւ արգելելով, ասենք, ձին եւ գրաստը ախոռում իրար կողքի կապելու հնարաւորութիւնը³: Նոյն կերպ արգելուած է նաեւ կաթի եւ մսի համար նախատեսուած սպասքը միասին պահելը⁴, փոխարէնն ընդունելի համարելով իգական եւ արական սեռի զինուորների ննջումը զօրանոցային միեւնոյն սենեակում⁵:

Յայտնի է, որ մի շարք կրօններում առկայ արգելքների զգալի խումբ վերաբերում է սննդին, ինչի կապակցութեամբ մեր միջավայրում թերեւս առաւել յաճախ արծարծուածը հրեաների եւ արաբների (իմա՛ յուդայականութիւն-իսլամ) սննդային խիստ սահմանափակումներն են⁶, որ հայ

¹* Ստացուել է՝ 3.03.2025, գրախօսուել է՝ 4.04.2025: Էլ. հասցէ՝ hamalsaran@hotmail.com, a_khudaverdyan@mail.ru:

² Այս առթիւ տե՛ս, օրինակ, E. DURKHEIM, The Elementary Forms of the Religious Life, Translated from the French by J. W. Swain M. A., London, 1915–1964, 130, 410 եւ այլն:

³ Տե՛ս E. DURKHEIM, նշ. աշխ., էջ 34:

⁴ Տե՛ս I. KLEIN, A guide to Jewish religious practice, New York, 1979, էջ 359–378, D. C. KRAEMER, Jewish Eating and Identity Through the Ages, New York, 2007, էջ 85–90, Joseph Karo, Shulchan Arukh, Venice, 1565, Yoreh De'ah 95:1: Սուրբ Գրքում այս կապակցութեամբ ուղղակի հրահանգ չկայ: Հնարաւոր աղերս են ենթադրում Ելք ԻԳ. 19, Ելք ԼԴ. 26, Բ. Օրին. ԺԴ. 21 համախօս տողերը. «Եւ մի՛ եփեսցես զգառն ի կաթն մօր իւրոյ»:

⁵ Տե՛ս O. SASSON-LEVY, Feminism and Military Gender Practices: Israeli Women Soldiers in 'Masculine' Roles, Armed Forces & Society, հտ. 29, թիւ 1, 2003, էջ 55–75, հմմտ. E. LOMSKY-FEDER, E. BEN-ARI, The Cultural Construction of Conflict and the Israeli Military, The Military and Militarism in Israeli Society, New York, 1999, էջ 3–58:

⁶ Իրենց յորջորջմամբ՝ կօշեր եւ տրէյֆ-նալալ-նարամ:

իրականութեան մէջ հիմնականում աղերսակցում են խոզի մսից հրաժարուելու հանգամանքին:

Դիտելի է, որ այս երկու աբրահամեան կրօնների համար սննդային ներկայ արգելքի հիմքում ընկած են բնագրային գրեթէ նոյն աղբիւրներն ու սննդի մաքրութեան մասին պատկերացումները, ըստ որոնց խոզը համարւում է անմաքուր, եւ դրա օգտագործումը բացառուած է: Ի մասնաւորի Ղեւտական ԺԱ. 7–8 հատուածում ասւում է. «Եւ խոզ՝ զի թաթահերձ է՝ եւ կճղակս ունի՝ եւ որոճայ ոչ, պիղծ իցէ նա ձեզ: Ի մսոյ նոցա մի՛ ուտիցէք, եւ ի գէշ նոցա մի՛ մերձենայցէք. քանզի պիղծ իցէ ձեզ այն»: Արդէն երկրորդ Օրէնքում կարդում ենք. «Մի՛ ուտիցէք... եւ խոզ, զի թաթահերձ եւ կճղակաբաշխ է, եւ որոճէ ոչ, անսո՛ւրբ իցէ նա ձեզ. ի մսոյ նոցա մի՛ ուտիցէք, եւ ի մեռեալ նոցա մի՛ մերձենայցէք» (ԺԴ. 8): Սուրբգրական այս արգելքը յուդայականութեան պարագային ներմուծուել է սննդային օրէնքների շարքը, որ սահմանում է թոյլատրելի եւ անթոյլատրելի սնունդը: Իսլամում եւս խոզի միսն արգելուած է, եւ դա շեշտւում է Ղուրանում, մասնաւորապէս Ալ-Բակարա 2:173, Ալ-Մաիդա 5:3, Ալ-Անամ 6:145 եւ Ալ-Նահլ 16:115 սուրահներում եւ վերաբերում է արգելուածի (հարամ) հասկացութեանը: Իսլամական աստուածաբանութեան տեսակէտից արգելքը բացատրելի է ոչ միայն մաքրակենցաղութեան, այլեւ բարոյական եւ հոգեւոր հանգամանքներով:

Բնական է կարծելը, որ դիտարկուող արգելքը պէտք է յայտնուեր նաեւ քրիստոնէական պահանջների եւ սահմանափակումների կարգում: Սակայն հարցը հանգուցալուծուել է ոչ թէ հինկտակարանեան պատուիրաններով, որ արգելում են խոզի միսը, այլ նոր կտակարանի դրոյթների համապատասխանութեամբ՝ ի թիւս այլոց Մարկոս է. 18–19 խօսքերով. «Եւ ասէ ցնոսա. Այդպէս եւ դուք անմիտք էք. ո՛չ իմանայք, եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ, ո՛չ կարէ զնա պղծել. զի ո՛չ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն. եւ արտաքս ելանէ. եւ սրբէ զամենայն կերակուրսն: Եւ ասէր, թէ որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ: Զի ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք շարութեան ելանեն՝ շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սպանութիւնք, ազահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիշութիւն, չարականութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: Այս ամենայն չարիք՝ ի ներքուստ ելանեն, եւ պղծեն զմարդ»: Այս հատուածը համարւում է այն սկզբունքային դրոյթներից մէկը, որը հիմք հան-

դիսացաւ յուդայականութեան սննդային օրէնքներից հրաժարուելու համար: Գործք առաքելոց Ժ. 9–16 հատուածը նկարագրում է Պետրոս առաքելի դէպքը, որտեղ նա «ի տանիսն կալ յաղօթն զվեցերորդ ժամուն. քաղցեալ, եւ կամէր ճաշակել: Եւ ի պատրաստելն նոցա՝ եղեւ ի վերայ նորա զարմացումն: Եւ տեսանէ զերկինս բացեալ. եւ զշորեցունց տըտնոց կախեալ անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի իջեալ նստեալ ի վերայ երկրի. յորում էին ամենայն շորքոտանիք, եւ սողունք երկրի, եւ թռչունք երկնից: Եւ եղեւ ձայն առ նա յերկնից. Արի՛, Պետրո՛ս, զե՛ն եւ կե՛ր: Եւ Պետրոս ապէ. Քա՛ւ լիցի, Տէ՛ր, զի ո՛չ երբէք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ: Զայն եղեւ առ նա կրկին անգամ. «Զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր»: Այս դրուագը յոյժ կարեւոր է, քանի որ այն ցոյց է տալիս, որ Աստուած Ինքն է չեղարկել նախկին սննդային օրէնքները: Միւս ուշագրաւ հատուածը Կողոսացիներին Բ. 16–17-ն է, ուր, ակնարկելով խորհրդանշները, որ կատարելութիւն են գտել Քրիստոսում, Պողոսը գրում է. «Մի՛ ոք այսուհետեւ զձեզ դատեսցի՝ ուտելով կամ ըմպելով, կամ մասամբք տօնից, կամ ամսամտիւք կամ շաբաթուք. որ են ստուերք հանդերձելոցն. այլ մարմին Քրիստոս է»: Ընդհանուր պատկերն ի մի բերելով՝ կարելի է նկատել, որ քրիստոնէութեան մէջ խոզի միս ուտելու արգելքը վերացել է նոր Կտակարանում արծարծուած սկզբունքների համապատասխանութեամբ, ըստ որոնց Յիսուս Քրիստոս եւ Իր աշակերտներն ուսուցանում էին, որ հաւատքը հիմնուած է հոգեւոր մաքրութեան, այլ ոչ թէ սննդային կամ այլ արգելքների վրայ, որովհետեւ «ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ» (Մատթ. ԺԵ. 11):

Բերուած եւ նման հատուածներն աստուածաբանական հիմք հանդիսացան յուդայականութեան սննդային օրէնքներից հրաժարուելու համար՝ էապէս ընդլայնելով քրիստոնեաների ազատութիւնները, ինչի շնորհիւ մահմեդականութեան եւ յուդայականութեան հետ միեւնոյն աղբիւրից օգտուելով հանդերձ՝ քրիստոնէութիւնն ընթացաւ այլ ճանապարհով եւ ձերբազատուեց աւելորդ սահմանափակումներից:

Երեք կրօնների փոխառնչութիւններն ի նկատ առնելով՝ առաջնային է դառնում յուդայականութեան ազդեցութիւնը, ինչին զուգահեռ անմիջապէս ծագում է այն հարցը, թէ հրէաներն իրենց հերթին ումից կարող էին ազդուել: Շատերի կարծիքով խոզի մսից հրաժարումը հրեաների պարագային կրօնամշակութային փոխառութեան արդիւնք

չէ, այլ ներազգային միջավայրում ձեւաւորուած երեւոյթ⁷: Սակայն ի մտի ունենալով հրեաների մշակութային բազմաթիւ փոխառութիւնները, ինչպէս այլազան հարեւաններից, այնպէս եւ եգիպտական կրօնի որոշ ազդեցութիւնը յուղայականութեան վրայ⁸՝ տեղին են նաեւ կասկածները, որ գերութեան շրջանը կարող էր արտայայտուել հրեաների սննդակարգում: Այս կապակցութեամբ նկատելի է, որ իրապէս Հին Եգիպտոսում ընդունելի ու խոտելի կերակրի գաղափարն առկայ է: Բնակչութեան սննդակարգում եղել են որոշ սահմանափակումներ. օրինակ՝ ոչ բոլոր կենդանիների միսն էին «ճիշտ» համարում զոհաբերութեան կամ ուտելու համար, եւ յստակ է, որ գոյութիւն ունէին արգելքներ՝ կապուած սննդի եւ հոգեւոր մաքրութեան հետ: Օրինակ՝ քրմերը պէտք է յատուկ սննդակարգի հետեւէին, որպէսզի իրենց անձերը մաքուր պահէին պաշտամունքային ծառայութեան համար⁹: Այս եւ նմանատիպ վկայութիւններն այնուամենայնիւ ստիպում են, որ առնուազն լիակատար վստահութեամբ չընդունուեն խոզի կիրառութիւնից հրեաների ինքնուրոյն հրաժարուելու այլազան պնդումները: Եւ պատճառն այն է, որ անկախ ամեն տեսակի «ճարտար ու գանգուր» հիմնաւորումներից ու «անկողմնակալ» հրապարակումներից, Հերոդոտոսի Բ. 47 հատուածը բաւարար է արտաքին ազդակների մասին կասկածների ձեւաւորման համար: Պատմագրի խօսքով եգիպտացիները խոզերին համարում են պիղծ եւ անմաքուր կենդանիներ: Այն աստիճան, որ եթէ եգիպտացին պատահմամբ դիպչի խոզի, ապա նա պիտի գնայ եւ ամբողջովին՝ հագուստով հանդերձ, մտնի գետը՝ իրեն մաքրելու համար: Հեղինակը սրան յաւելում է, թէ խոզապահները, չնայած ծագմամբ եգիպտացի են, այնուամենայնիւ արգելուած է, որ նրանք որեւէ եգիպտական տաճար մուտք գործեն: Եւ վերջապէս վերաբերմունքի անմիջական արտայայտութիւն է այն, որ, ըստ Հերոդոտոսի, ոչ ոք իր աղջ-

⁷ Տէս, օրինակ, W. HOUSTON, Purity and Monotheism: Clean and Unclean Animals in Biblical Law. Sheffield Academic Press, 1993, էջ 87, MARY DOUGLAS, Purity and Danger, Routledge Classics, 2002, էջ 126:

⁸ Տէս, օրինակ, MATTHEWS, VICTOR H., AND DON C. BENJAMIN, Old Testament Parallels: Laws and Stories from the Ancient Near East. New York: Paulist Press, 1991:

⁹ Տէս <https://anetoday.org/volokhine-egypt-food-prohibitions/>, հմմտ. DR/ZEINAB SAID HASHESH, Priests Food taboos in ancient Egypt—https://sjam.journals.ekb.eg/article_266323_a603898ac740d812b92447bffa1bdbea1.pdf, KOOT VAN WYK, Pig Taboos in the Ancient near East— https://www.ijhssnet.com/journals/Vol_4_No_13_November_2014/15.pdf:

կան խոզապանի կնուսթեան չէր տալիս, եւ ոչ ոք չէր հարսնախօսում խոզապանի դստերը. խոզապանների սերունդներն ամուսնանում էին միայն իրենց միջավայրում: Կարելոր է նաեւ այն յիշատակութիւնը, որ եգիպտացիները ճիշտ չեն համարում որեւէ աստծու խոզ զոհել: Բացառութիւն են Լուսինը եւ Դիոնիսոսը. լոկ նրանց էին խոզ զոհաբերում եւ միայն ու միայն լիալուսնին, ուստի այդ օրերին է, որ եգիպտացիները խոզի միս էին ճաշակում¹⁰: Ըստ այսմ դիտելի է, որ եգիպտական ազդեցութիւնը լիովին հնարաւոր է: Եթէ խոզին դիպչող կամ խոզապահ եգիպտացիները խնդիր էին ունենում, ապա որքան աւելի ծանր պիտի լինէր նոյն վիճակում յայտնուած հրէա ստրուկի վիճակը: Յամենայն դէպս գոնէ ընդհանուր ազդակներ կարելի է գտնէ նշմարել:

Սակայն սննդային արգելքների խնդիրը չի սահմանափակում սոսկ սրանով: Գիտնականների մի խումբ ենթադրում է, որ Հին Եգիպտոսում գոյութիւն ունեցող մաքրութեան եւ զոհաբերութեան արգելքները կարող էին ազդել ընդհանրապէս սեմական ժողովուրդների վրայ եւ ընդմիջարկութեամբ տարածուելով հասնել հրեաներին: Սակայն առաւել տարածուած է այն տեսակէտը, ըստ որի երեւոյթը ձեւաւորուել է հէնց սեմական միջավայրում՝ Քանաանի եւ Միջագետքի մշակոյթների ազդեցութեամբ, իսկ Եգիպտոսն ընդամենը միջանկեալ դեր է խաղացել¹¹: Հնարաւոր միւս ուղղութիւնը ասուրաբաբելական ազդեցութիւնն է, որի կապակցութեամբ կարելոր է Ք. ա. մօտ 3000–600 թթ. Միջագետքի սննդակարգի վերաբերեալ ուսումնասիրութիւնը, ըստ որի խոզի միսն արքայական սեղաններին էր լինում. «Ուր քաղաքից մեզ հասած երկու արձանագրութիւններում դրոշմուած է, որ թագաւորի ճաշացանկում ընդգրկուած էին ոչխարի, խոզի, թռչնի միսը, ձկները նաեւ կաթնամթերք, բանջարեղէն ու պտուղներ»¹²: Ինչպէս տեսնում ենք համեմատաբար փոքր տարածաշրջանում խոզի միս հանդէպ տարբեր վերաբերմունք է դրսեւորւում, որ եւ խաբուսիկ է, որովհետեւ ժամանակագրական կարճաժամ տողերում հազարամեակներ են խտացած, որոնց ընթացքին սննդակարգի փոփո-

¹⁰ Տէս, օրինակ, Herodotus of Halicarnassus, The Histories, Pax Librorum, 2010, էջ 109:

¹¹ Տէս MAX D. PRICE, Evolution of a Taboo: Pigs and People in the Ancient Near East, Oxford University Press, 2021, յատկապէս գլ. 5–6:

¹² Տէս E. R. ELLISON, A Study of Diet in Mesopotamia (c. 3000 – 600 BC) and Associated Agricultural Techniques and Methods of Food Preparation, Thesis submitted to the University of London in the Faculty of Arts for the Degree of Doctor of Philosophy May, 1978, էջ 150:

խուլթիւններն ու ժողովուրդների տեղաշարժերը կարող էին անթիւ լինել՝ բխելով տարբեր հանգամանքներից: Եւ այս առումով դիտելի է, որ անկախ սննդակարգից դուրս մղուելուց հրէական միջավայրում խոզն ընկալուելիս է եղել իբրեւ ապականութեան եւ անմաքրութեան խորհրդանիշ: Օրինակ Գ. Թագաւորութեանց Ի. գլխում կարգում ենք. «Ի տեղուոյ ուր լափեցին շունք եւ խոզք զարիւն Նաբովթայ, անդ լափեսցեն զարիւն քո, եւ բոզք լուսացին յարեան քում» (20). սրանով երկու կենդանիները ներկայացում են իբրեւ բացասական, մերժելի ու խոտելի: Սակայն կարեւոր է յիշել, որ շան եւ խոզի վերաբերեալ այս եւ նման ընկալումները ոչ թէ բնորոշ են զուտ միայն հրեաներին, այլ վստահաբար տարածաշրջանի քաղաքակրթական սկզբունքների արձագանքն են կրում: Բաւարար է յիշել, որ տակաւին Ք. ա. ԺԴ. դարում, Խեթական թագաւորութեան ծաղկման շրջանին «խոզը ցածր կարգավիճակ ունէր: Այն համարում էր անմաքուր նոյն պատճառներով, ինչ Մերձաւոր Արեւելքի այլ տարածքներում: Ուստի տաճարական վերադիտողների սկզբունքն էր. «Ո՛չ խոզը, ո՛չ շունը երբեք չպէտք է անցնեն սրբարանի շեմը... Եթէ դրանք որեւէ կերպ հասնեն այն մասին, ուր փայտէ կամ կաւէ սպասքն է պահոււմ, եւ դրանից յետոյ սպասաւորն ապականուած ամանեղէնը դուրս չնետի, այլ աստուածներին մատուցի անմաքուր անօթները, ապա աստուածները նրան կղանք եւ մէզ կհրամցնեն իբրեւ ուտելի եւ ըմպելի»¹³: Այս երեւոյթին եւ յատկապէս շան մերժելիութեանն ըստ ամենայնի հարազատ դրսեւորում պիտի համարենք իսլամի այն պատուիրանը, ըստ որի եթէ շունը լիզի սպասքը, ապա ամանեղէնը ենթակայ է լուսցման եօթն անգամ եւ առաջին հերթին՝ աւազով¹⁴:

Ուշագրաւ է օքսֆորդեան մերօրեայ հետազոտողի տեսակէտը: Նա պնդում է, որ Իսրայէլի, Պաղեստինի, Լիբանանի, Սիրիայի, Յորդանանի տարածաշրջանում Երկաթի դարաշրջանի կենդանական գտածոները թոյլ են տալիս վերականգնել հին իսրայէլացիների միջավայրում առկայ արգելքը, որը մեծ մասամբ զարգացել է որպէս հակազդեցութիւն փղշտացիների սննդային սովորոյթներին: Նա նշում է, որ այս արգելքն աւելի ակնառու կերպով ի յայտ եկաւ Յուդայում՝ Թորայի ստեղծման

¹³ S. Koot van Wyk, Pig Taboos in the Ancient near East, International Journal of Humanities and Social Science, Vol. 4, No. 13; November 2014, էջ 113:

¹⁴ Sahih Muslim – Book of Purification (Kitab al-Taharah), Hadith No. 279:

ժամանակ՝ Ք. ա. Հ-է. դարերում: Իր համոզմամբ սուրբգրական հեղինակները ձգտում էին ձեւաւորել իսրայէլացւոց հերոսական անցեալի պատկեր, որ եբրայախօսների շրջանում ազգային միասնութեան զգացում ստեղծելու նախագծի մի մասն էր: Նրանց գաղափարի իրագործման համար կարեւոր էր նաեւ խոզի մսի բացառմամբ կազմուած աւանդական սննդակարգի հանգամանքը, եւ դրան միտուած համապատասխան սահմանափակումների առկայութիւնը: Խոզի մսից հրաժարուելու վերաբերեալ նոյնպիսի արգելք էր ուղղուած նաեւ Մերձաւոր Արեւելքի տարբեր մասերում հանգրուանած քահանաներին եւ իրենց համայնքներին, եւ աստուածաշնչեան հեղինակներն այս աւանդոյթներն օգտակար են համարել երեւելի եւ հաւատացեալ նախնիների պատկեր ստեղծելու համար¹⁵ խոզի մսից հրաժարումը դարձնելով հարեւաններից տարանջատուելու եւ ազգային ինքնութեան կարեւոր ցուցիչ:

Փղշտացիների սննդային սովորոյթներին դէմ կանգնելու կապակցութեամբ պէտք է յիշել, որ այդ ժողովրդին ծագումնաբանօրէն կապում են էգէեան եւ Կիպրոսեան ծովային քաղաքակրթութիւններն¹⁶: Այսինքն՝ նրանք մշակութային առումով մօտ են եղել միքէեան եւ մինոյական սննդային սովորութիւններին: Սա արդէն յուշում է, որ փղշտացիները Միջերկրածովեան կերակրացանկ են ունեցել՝ հացահատիկ, ձիթապտուղ, գինի, ձուկ... եւ ի թիւս այլոց խոզի միս: Եւ սրան պէտք է յաւելել հետեւեալը. ըստ հնագիտական պեղումներից ստացուած տուեալների որոշակի տարածքներում (օր.՝ Աշկելօն, Աշդօդ) խոզի ոսկորները բաւականին առատ են, ինչը վկայում է, որ դրանք փղշտացիների բնակավայրեր են, քանի որ յուդայական միջավայրում խոզի միսը խստիւ արգելուած է եղել: Իսկ սրան յաջորդող կրօնագիտական բնագաւառի եզրակացութիւնն այն է, որ փղշտացիներն ունեցել են հրեաներին գրեթէ լիովին հակառակ արժեհամակարգ. իբրեւ

¹⁵ SÉA MAX D. PRICE, նշ. աշխ., յատկապէս «The Coming of the Taboo: Pigs in the Iron Age», գլուխը՝ էջ 116–141:

¹⁶ Այս կապակցութեամբ տե՛ս M. FELDMAN, D. M. MASTER, R. A. BIANCO, M. BURRI, P. W. STOCKHAMMER, ALISSA MITTNIK, A. J. AJA, CH. JEONG, J. KRAUSE, Ancient DNA sheds light on the genetic origins of early Iron Age Philistines, Science Advances, 3 Jul 2019, Vol. 5, Issue. 7, հմմտ. MEGAN SAUTER, Illuminating the Philistines' Origins, Ancient DNA Confirms the Philistines' European Ancestry, <https://www.biblicalarchaeology.org/daily/people-cultures-in-the-bible/illuminating-the-philistines-origins/>:

սնունդ նրանք առատորէն օգտագործել են այն, ինչն իսրայէլացիների համար պղծութիւն էր¹⁷:

Ինչպէս կարելի է նկատել վերելի տողերից որոշակի պահի հնագիտութիւնն ու կրօնագիտութիւնը այլեւս վեր են ածուծ աշխարհաքաղաքական գործիքների՝ հետազոտութիւնների մասնակիցներին դարձնելով՝ ազգային կամ պետական շահերի սպասարկու՝ երբեմն հիմնովին կուրացնելով գիտական միտքը եւ ստիպելով, որ այդպիսիներին քննադատելով ընդդիմախօսները գրեն. «Կարող են խոզի մնացորդներն օգտագործուել Հին Մերձաւոր Արեւելքում ազգային պատկանելիութիւնը որոշելու համար» յօդուածի հեղինակները քննադատում են այն սուրբգրական պատմաբաններին եւ հնագէտներին, ովքեր պնդել են, թէ Քանաանի հնավայրերում խոզի ոսկորների բացակայութիւնը վկայում է, որ դա իսրայէլացիների ազգային տարածքն է: Եթէ այս չափանիշն ընդունուի որպէս նրանց ներկայութեան ցուցիչ, ապա կստացուի, որ հին աշխարհում բազմապատիկ աւելի շատ իսրայէլացիներ են եղել, քան երբեւէ կարելի էր երեւակայել»¹⁸: Անշուշտ այս կարճ տողերը չէզոքացնում են այն բոլոր հատորները, որ ստեղծուել են խոզի մնացորդների բացակայութեամբ նոր տարածքների յաւակնելու նպատակով, բայց եւ դժուար չէ նկատել, որ կրօնական ծագում ունեցող շնչին հանգամանքը մեծ ասպարէզ է բացել պատմական կեղծիքների համար: Իսկ որտեղ կեղծիք, այնտեղ չգրուած օրէնքով առաջնային դիրքերում պիտի լինեն մեր հարեւանները կամ նրանց ծառայելու միտտածները, որ գուցէ ապագայի յոյսերով կարող են երկնել. «Վանայ լճի աւազանի, Բաստամի, Կարմիր-Բլուրի ուրարտական շրջանի կենդանական մնացորդներում խոզի եւ վարազի ոսկորների ու բեկորների բացակայութիւնը վկայում է դրանց կիրառութեան դէմ որոշակի արգելքի մասին»¹⁹: Թերեւս այստեղ դժուար չէ նկատել վերելում՝ օքսֆօրդեան գիտնականի հերքած գա-

¹⁷ Scandinavian Journal of the Old Testament, 2015 Vol. 29, No. 1, 110–116, <http://dx.doi.org/10.1080/09018328.2015.1025549> Food or Drink? Pork or Wine? The Philistines and their “Ethnic” Markers, <https://www.biblicalarchaeology.org/daily/ancient-cultures/daily-life-and-practice/israelite-diet-archaeology/>;

¹⁸ Տէս «Journal of the American Oriental society», հտ. 120, հոկտ.-նոյ., դեկտ., 2000:

¹⁹ A. B. SIDDIQ, M. İŞIKLI, Tracing royal consumption and socio-symbolism through faunal remains: Zooarchaeology of Iron Age—Uratu Ayanis citadel, Eastern Türkiye, Journal of Archaeological Science: Reports, հտ. 55, May 2024, յօդուած 104505, հմմտ. E. KONYAR ԵՎ ԱՅՍՆ, Zooarchaeology of the Urartian Fortress of Ayanis (Van Lake Basin, Eastern Turkey)”, Journal of Archaeological Science: Report, s 54, 2024, յօդուած 103897:

ղափարի հետ հարազատությունը. «խոզի ոսկորների բացակայությունը վկայում է, որ դա որոշակի ազգի տարածք է»:

Համընդհանուր համաձայնության արժանացած տեսությունն համաձայն խոզն ընտանի է դարձել եւ ըստ այդմ ներմուծուել է վաղնջական մարդու սննդակարգ անյիշելի ժամանակներում: Անգամ ենթադրում են, թէ խոզն է այն առաջին կենդանին, որին ընտելացրել ու ընտանի են դարձրել Մերձատոր Արեւելքում՝ ըստ ամենայնի՝ Տիգրիսի աւազանում Ք. ա. 13 000–12 700 թուականներին²⁰: Համարում է, որ Զինաստանում վայրի խոզերն ընտանի են դարձել Ք. ա. մօտ 8000 թուականին: Այդ համաձայնքի կարելությունը, թերեւս, կարելի է պատկերացնել հաշուի առնելով այն փաստը, որ «ընտանի», եւ «խոզ» գաղափարներն արտայայտելու համար ձեռնաց աշխարհում կիրառուել է նոյն հիէրոգլիֆը²¹:

Խոզի որսը վաղնջական ժամանակներից համարուել է որսկանի ուժի, խիզախության եւ յաջողության վկայություն, ուստի լիովին ընկալելի է, թէ ինչու է այդ կենդանու պատկերը դրոշմուել Հայկական բարձրաւանդակի եւ համայն մարդկության այսօր յայտնի հնագոյն սրբարանում՝ Պորտասարի (Գեօքէքլի) 12 000 տարուայ հնութեան սիւներին²²: Պորտասարից 135 կմ հեռավորութեան վրայ գտնուող միւս վաղ-վաղնջական հնավայրի մասին հնագիտական պարբերականում կարդում ենք. «Տարածաշրջանի մէկ այլ վայրում՝ Չայօնիւ բլուրում, որը բնակեցուել է Ք. ա. մօտ 8600 թուականին, 1960-ականներից մինչեւ 1990-ական թուականները պեղումներ կատարող հնագէտները յայտնաբերել են վարազի ատամներ եւ գանգեր, որոնք պատկանել են համեմատաբար մատաղ կենդանիների եւ աւելի փոքր են, քան նորքարէդարի սկզբով թուագրուող նմուշները: Զեղէրը կարծում է, որ այս կառուցուածքային փոփոխությունները ցոյց են տալիս, որ Չայօնիւ բլուրում եւ, գրեթէ անկասկած նաեւ

²⁰ Տէս S. M. NELSON, (1998) Ancestors for the Pigs, Pigs in Prehistory. University of Pennsylvania. <http://www.upenn.edu/pennpress/book/13685.html>:

²¹ Տէս ILIA BRONDZ, Islam, Judaism, Prohibition on Eating Pork, Prohibition on Consuming Blood as a Food, Domestic Pig, *Sus scrofa domesticus*, Kosher, Halal, Why Judaism and Islam Prohibit Eating Pork and Consuming Blood as a Food? Voice of the Publisher, 2018, 4, էջ 23:

²² Տէս MANN, C. C. (2011) Göbekli Tepe: The Birth of Religion, National Geographic. <http://solutions.cengage.com/uploadedFiles/solutionscengagecom/Marketing-Micro sites/NGL/design-gallery/Religion.pdf>, հմմտ. SCHAM, S. (2008) The World's First Temple. Archaeology, 61. <https://archive.archaeology.org/0811/abstracts/turkey.html>, հմմտ. MANN, C. C. (2011) The Birth of Religion—National Geographic Magazine—NGM.com. <http://ngm.nationalgeographic.com/print/2011/06/gobekli-tepe/mann-text>:

տարածքի այլ բնակավայրերում ապրող մարդիկ սկսել են ընտելացնել այդ վայրի կենդանիներին»²³:

Ձայօնիւ բլուրի տեղադրութիւնը հայ ընթերցողին ընկալելի դարձնելու համար ասենք, որ այն Սիլուանից 100, Սասունից մօտ 150 կմ, իսկ Արեւմտեան Հայաստանի Զերմուկ կամ Զերմիկ (Թրքացուած Զերմիկ) անունից 20 կմ է հեռու, Տիգրանակերտ Ամիդի նահանգում է, որ Դիարբաքիր է կոչւում, որպէսզի հայկականութիւնը սքողուի: Բայց նոյնիսկ այս տարբերակը որեւէ Թրքականութիւն չի ենթադրում, որովհետեւ ներկայիս անունն առաջացել է հազարացուց՝ է. դարի ներխուժման արդիւնքում եւ բնիկ արաբներէն լինելով՝ նշանակում է Բաքրի (կամ բաքրաց) տարածք²⁴:

Գալով աւելի նոր դարաշրջանների կարող ենք ականատեսը լինել հետաքրքիր դէպքերի, որ վկայուած են թէ՛ մատենագրօրէն, թէ՛ դիցաբանութեամբ: Օրինակ՝ խոզի որսով ուժ եւ կորով²⁵ բնորոշելու լաւ դէպք է Մովսէս Խորենացու նկարագրութիւնը. «Ի ծննդոց Գառնկայ աստ ուրեմն առ Արտաշիսի թոռամբ Վաղարշակայ ոմն Վարաժ անուն պատանի լեալ աջող յորս եղջերուաց եւ այծեմանց եւ վարագուց» (Մովսէս Խորենացի, Ա. Ժբ.): Խորենացու յաջորդող տողերը վկայում են, որ խոզը կիրառուել է նաեւ զոհաբերութիւնների ժամանակ. «Եւ այսպէս մեհեանս շինեալ, եւ առաջի մեհենիցն բագինս կանգնեալ, զոհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն

²³ SĒu A. LAWLER, On the Origin of the Pork Taboo: Exploring ancient people's shifting beliefs about rearing and eating pigs, March/April 2025, <https://archaeology.org/issues/march-april-2025/letters-from/on-the-origin-of-the-pork-taboo/#:~:text=Image%20A%20terracotta%20figurine%20in,during%20the%20Early%20Dynastic%20period>:

²⁴ SĒu <https://www.livius.org/articles/place/amida/>, համտ. «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան», նաեւ՝ «Քաղաքի Դիյարբէքիր անունը օսմանեան փաստաթղթերում առաջին անգամ կիրառուած ենք տեսնում միայն 1691–1692 թթ., այսինքն՝ քաղաքի մահմեդական անունն աւելի ուշ է քաղաքացիութիւն ստացել». տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 32, էջ 64:

²⁵ Վարազ-խոզը հնում դիտուել է ոչ թէ իբրեւ դատապարտուած որս, այլ իբրեւ վտանգաւոր փորութիւն: Յունական դիցաբանութեան մէջ շատ առանցքային հերոսների պարագային են յիշում վայրի խոզը կամ վարազը. օրինակ՝ Հերակլէսի երրորդ սխրանքը Արկադիա երկիրն ամալացնող էրիմանթոսեան վարազին որսալն էր, իսկ Ադօնիսի մասին պատմում են, թէ զոհուեց վարազի հասցրած վէրքերից. տե՛ս «Դիցաբանական բառարան», Երեւան, 1985, էջ 155, S. B. LUCE, Studies of the Exploits of Heracles on Vases, American Journal of Archaeology, 1916, 28, 3, 1924, 297, OVID, Metamorphoses, գիրք 10, տող 708–739. Loeb Classical Library, Cambridge, 1916, էջ 453–459:

արանց ազգին Բագրատունեաց, յորոց զմիոյ ուրումն զլեզուն հատեալ, որում անուն էր Ասուդ, վասն պատկերացն անարգանացն՝ ոչ այլ իւրիք խոշտանգէ. քանզի յանձն առին ուտել ի զոհիցն արքայի եւ զմիս խոզի, թէպէտ եւ ոչ ինքեանք զոհեցին երկրպագութեամբ: Վասն որոյ առնու ի նոցանէ ի բաց զիշխանութիւն զօրուն, բայց միայն զթագակապ ասպետութիւնն ոչ հանէ: Ինքն իջանէ ի Միջագետս, եւ գտեալ անդ զԲարշամինայ զպատկերն, զոր ի փղոսկրէ եւ ի բիւրեղէ կազմեալ էր արծաթով՝ հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան»: (Խորենացի Բ. Ժդ.): Աստծուն ընծայուող պատարագի առումով յատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում Արամ Ղանալանեանի գրառումը. «Ժ. Երբ Նոյ նահապետը, իր տնկած խաղողի որթից գինի պատրաստելով, փորձում է համը, շատ խմելուց սաստիկ հարբում է: Կորցնելով իրեն՝ Նոյը մերկանդամ պառկում ու քնում է: Սեմն ու Քամը տեսնելով իրենց հօրն այդ վիճակում, ծիծաղում եւ լուր են տալիս Յաբէթին: Սա ծածկում է Նոյի մերկ մարմինը, որպէսզի եղբայրները այլեւս չծիծաղեն: Արթնանալուց յետոյ Նոյն անիծում է Սեմին ու Քամին, եւ օրհնում Յաբէթին: Մի քանի օր անց, նա բարձրանում է Մասսի գագաթը եւ այնտեղից շնորհակալութեան զոհ մատուցում Աստծուն՝ ի պատիւ խաղողի որթի եւ գինու: Առաջին անգամ Նոյը զոհում է մի գառ, երկրորդ անգամ՝ մի կապիկ, իսկ երրորդ անգամ՝ մի խոզ: Երբ Յաբէթը հարցնում է հօրը յիշեալ կենդանիների զոհաբերութեան պատճառը, Նոյը պատասխանում է. «Առաջին գաւաթը խմելիս մարդ գառան նման հանգիստ ու անմեղ վիճակի մէջ է լինում. երկրորդին՝ կապիկի նման զուարճաբան ու ծիծաղելի է դառնում. երրորդին՝ խոզի պէս սկսում է թաւալել տիղմերի մէջ...»: Այս ասելուց յետոյ, Նոյն աւելացնում է. «Թող ձեզ խրատ լինի իմ օրինակը»²⁶: Ներկայ աւանդազրոյցում յիշատակուած ողջակէզի կենդանիները բանահիւսական տեսանկիւնից ընտրուած են հարբած մարդու երեք տարբեր վիճակները բնութագրելու համար, սակայն նաեւ աստուածաբանական կողմից դիտելի է դրանց ընծայելու հաւանականութիւնը, ակնարկը, որ Նոյ նահապետը կարող էր ցանկացած արարածով զոհ մատուցել՝ ինչպէս երեք յիշեալները: Ուստի միանշանակ է, որ ջրհեղեղից փրկուածների սննդակարգում խոզի-վարազի միսն ընդգրկուած եղել է ըստ այս աւանդութեան:

²⁶ Ա. ՂԱՆԱԼԱՆԵԱՆ, Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 335:

Բայց հայկական զրոյցի մեծագոյն տարբերութիւնն այն է ներկայ հատուածում, որ ի հակադրութիւն աստուածաշնչեան պատումին, ուր Յաբէթն ու Սէմը միասին են ծածկում հօր մերկութիւնը (Թ. 20–27), այստեղ Յաբէթն այդ բանն անում է միայնակ, ուստի Նոյն անիծում է Սէմին ու Քամին, եւ օրհնում միայն Յաբէթին՝ բանասիրական տեսանկիւնից աւելի կոռ եւ տրամաբանական շարադրանք դրսեւորելով²⁷:

Ներկայ պարփակ, ամբողջն ընդգրկուելու ամենեւին յաւակնութիւն չունեցող ակնարկում տեսանք, որ տարբեր մշակոյթներում խոզի հանդէպ վերաբերմունքը բացասական էր, մինչդեռ մեր միջավայրում ընկալումը դրա հակառակն է՝ խոզ-վարազը դիտուել է իբրեւ ուժի եւ կարողութեան խորհրդանիշ, որով եւ բացատրելի է Վարազ անուան մեծ տարածումը հին Հայոց մէջ²⁸: Եւ սա մի հանգամանք է, որ պէտք է արժանանայ Հայկական բարձրաւանդակում անցկացուած պեղումներում վարազի-խոզի ոսկորների «քիչ հանդիպող» «հնագէտների» ուշադրութեանը, որովհետեւ մեր կարծիքով տանը կամ շրջապատում Վարազ ունեցողները, դժուար թէ յաճախակի ճաշակէին այդ կենդանու միսը:

²⁷ Այստեղ կարող է թուալ, թէ հայկական աւանդոյթում փորձ է արուել առաւել կարեւորելու ազգի նահապետի դերը, ուստի հարկ է նկատել, որ իրականում հրեաներին է յատուկ այդ երեւոյթը: Եահվէական, էյոհիմեան եւ քահանայական խմբագրութիւնների տարբերութիւնները ցոյց են տալիս «նպատակային խմբագրութիւնների» առկայութիւնը, որոնցից առաւել յայտնին Սէմին իբրեւ աւագ որդի ներկայացնելու փորձն է, ինչը բացայայտել են բնագրագէտ աստուածաբանները՝ Մենդ. Ե. 32-ում առկա տուեալներին հիմնուած հաշուարկների միջոցով: Գուգլ. Գէմինիի հաւաստմամբ այդ հաշուարկն առաջինն արել է Թ. Նեօլեկէն (1836–1930), իսկ Զիֆթի-ի տուեալով՝ Մ. Անսթին (1860 – 1925): Մինչդեռ Միքայէլ վրդ. Չամչեանցը նրանցից հարիւր տարի առաջ նախ յիշատակում էր Աղուանից Վարդան Գանձակեցի կամ Վարդան Մեծին եւ գրում էր. «Այլ բազումք հայեցեալ ի ճիշդ քննութիւն բանից Սուրբ Գրոց, եւ ի զուշատոր թարգմանութիւն եբրայական բնագրին, ասեն՝ թէ ոչ Սէմ, այլ Յաբէթ էր անդրանիկն: Եւ այսր կարծեաց մեծ եւ զօրաւոր պատճառ է այն, զի Սուրբ Գիրքն ասէ, թէ Նոյ ի 500 ամի իւրում ծնաւ զորդիս. եւ յաւելու, թէ ի 600 ամի նորա եղեւ ջրհեղեղն. եւ ապա ասէ ի գլ. ԺԱ. համար 10. թէ՛ «Սէմ որդի հարիւրամեան էր, յորժամ ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ամի ջրհեղեղին»: Արդ՝ եթէ յիշուի Սէմ էր անդրանիկն, եւ յերկրորդ ամի յետ ջրհեղեղին ծնաւ զԱրփաքսադ, պարտ էր ասել, թէ Սէմ էր յայնժամ հարիւր եւ երկու ամաց (որպէս քաջ ֆնտրեամբ ստիպի դնել Վարդան.— ընդգծումները մերն են). եւ կամ պարտ էր ասել, թէ Նոյ էր 498 ամաց ի ծնանիւն զՍէմ: Յայտ հայեցեալ՝ անտարակոյս համարիմք, թէ առաջին որդին՝ զոր ծնաւ Նոյ ի 500 ամի իւրում, ոչ էր Սէմ, այլ՝ Յաբէթ, եւ երկրորդն՝ Սէմ, ծնեալ ի 502 ամի նորա. որպէս դնէ Պետաւրիս...» ՄԻՔԱՅԷԼ ԶԱՄՉԵԱՆՅ, Պատմութիւն Հայոց, հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 146:

²⁸ Տե՛ս նաեւ բարդուած ձեւերը՝ Վարազդատ, Վարազդէն, Վարազդուխտ, Վարազ-խոսրով, Վարազման, Վարազ-Յոհան եւ այլն. ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց անձնանունների բառարան, Երեւան, 1942, հտ. 5: Թէեւ խոզ անոնով պատմական դէմքեր յայտնի չեն, բայց խոճկորիկ անունն այնուամենայնիւ յիշատակուած է. Մովսէս Կաղանկատուացի, Ա. ԺԺ., իլգ.:

Առաւել հիմնարար է Ղանալանեանի՝ բերուող գրառումը, որ կարող է բացատրութիւն հանդիսանալ անգամ յիշեալ կենդանիների ոսկրային մնացորդների կատարեալ բացակայութեան պարագային. «346. ՎԱ-ՐԱԶ. Հայոց Տրդատ թագաւորը Գրիգոր Լուսաւորչին շարշարելու պատճառով խոզ է դառնում եւ ընկնում սարերը: Մահուանից յետոյ նրա հոգին մտնում է վարազի մէջ եւ շրջում է սարերում, մինչեւ վերջին դատաստանի օրը: Ասում են, թէ վարազին սպանելը մեղք է, որովհետեւ դրանով սպանած կլինես Տրդատ թագաւորին: Մեղք է նաեւ խոզի միս ուտելը, որովհետեւ դրանով կերած կլինես Տրդատի միսը»²⁹: Եւ վերջապէս այստեղ պէտք է յիշել, որ խնդրոյ առարկայ կենդանին միայն սնունդի մէջ չէ, որ կիրառուում էր Հայկական բարձրաւանդակում: Դրանից անգամ օծանելիք էին պատրաստում, եւ ինչպէս կարելի է տեղեկանալ խեթական ժառանգութիւնից՝ «խոզի ճարպը չափազանց թանկ է եղել Փոքր Ասիայում»³⁰: Բացի այս հայ միջնադարեան աղբիւրներից կարելի է տեղեկանալ, որ խոզը կիրառուել է ամբողջութեամբ՝ թերեւս անմնացորդ, եւ անգամ ոսկորներն աղացուել, փշրուել կամ մանրուել են տարբեր դեղեր կամ մանրէների ու տգրուկների դէմ պայքարի միջոցներ պատրաստելու նպատակով: Օրինակ՝ «Գովք խոզի մսի»³¹ քերթուածում դեղագործ-բանաստեղծը բացատրում է, թէ խոզի տարբեր մասերով ինչպէս է պէտք դեղամիջոցներ պատրաստել եւ կիրառել այլեւայլ հիւանդութիւնների բուժման համար:

Իբրեւ ամփոփում կարելի է նկատել, որ խոզի մսից հրաժարուելու կրօնական պահանջը ժամանակին եղել է հարեւաններից տարանջատուելու եւ ազգային ինքնութեան կարեւոր ցուցիչ՝ մեր օրերում վերածուելով անգամ տարածքային նկրտումների համար «Իրաւական հիմքեր ապահովող» գործիքի: Վերելում ներկայացրել ենք Փրայսի պնդումը, թէ խոզի միսն իբրեւ սնունդ կիրառելու արգելքն աւելի ակնառու դարձաւ Յուդայում՝ Թորայի ստեղծման ժամանակ՝ Ք. ա. Ը-է. դարերում: Իր համոզմամբ սուրբգրական հեղինակները ձգտում էին ձեւաւորել իսրայէլացւոց հերոսական անցեալի պատկեր, որ եբրայախօսների շրջանում

²⁹ Ա. ՂԱՆԱԼԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 125:

³⁰ Տէ'ս H. HOFFNER, "Oil in Hittite Texts," Biblical Archaeologist 58 1995, էջ 109:

³¹ Տես օր. «Գովք խոզի մսի». Ա. ՄԱԴՈՅԵԱՆ, *Խորհուրդ մեծ եւ սքանչելի. Հայ մատենագրութիւն բոլորի համար, Թեհրան, 2009, հմմտ. ՄԱՄ, ձեռ. 413 «Բժշկարան», Պատմութիւն խոզի», էջ 118ա:*

ազգային միասնութեան զգացում ստեղծելու նախագծի մի մասն էր: Նրանց գաղափարի իրագործման համար կարեւոր էր նաեւ խոզի մսի բացառմամբ կազմուած աւանդական սննդակարգի հանգամանքը, եւ դրան միտուած համապատասխան սահմանափակումների առկայութիւնը³²: Սրան պէտք է յաւելել այն հետազոտութիւնների եզրայանգումը, թէ «խոզի արգելքը նպաստել է, որ նախախորայէլական համայնքները «Իսրայէլը ներկայացնեն որպէս միասնական համայնք, որը ծառայում է իր հովանաւոր միակ Աստծուն՝ միակ սրբավայրում»³³:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վարագ, խոզ, գովք խոզի մսի, հիւանդութիւն, հնազիտութիւն, հնախօսութիւն:

РЕЗЮМЕ

Статья посвящена исследованию религиозных представлений о допустимой и запретной пище в контексте авраамических традиций и древневосточных культур. Центральное место занимает анализ библейских и коранических предписаний, запрещающих употребление свинины, и их новозаветной интерпретации, где проблема ритуальной чистоты трансформируется в категорию духовно-этического измерения. Рассматриваются возможные истоки данных норм в культовой практике Древнего Египта, Месопотамии и Хеттского царства, а также их социально-символическое значение. В исследование включены археологические материалы, свидетельствующие о том, что пищевые табу могли служить маркерами этнокультурной идентичности и инструментами разграничения общин. Особое внимание уделяется армянской традиции, где

³² *Տէս ծան. 14*:

³³ *Տէս* V. HOLLAND, Pigs and Power: Tracking the Genealogical Evolution of Pigs from Symbols of Fertility to Weapons of Masculine Hegemony in Jewish and Christian Contexts, A thesis submitted for the degree of Doctor of Philosophy School of Religion, Theology, and Peace Studies Trinity College Dublin, Year of Submission, 2025, էջ 55, հմմտ. J. RHYDER., The Jewish Pig Prohibition from Leviticus to the Maccabees, Journal of Biblical Literature. (2023) 141:2, էջ 221–241., (էջ 228):

образ свиньи и вепря, в отличие от библейских и коранических интерпретаций, обретает положительные символические коннотации силы и доблести, что находит отражение в мифологии и историографии. В заключение подчёркивается, что феномен пищевых запретов, изначально возникший как религиозно-обрядовый институт, со временем превратился в важный механизм культурной самоидентификации и в современном дискурсе получил геополитическую интерпретацию.

SUMMARY

This article examines the concepts of permissible and forbidden food within various religious traditions, focusing primarily on the distinction between purity and impurity in the Abrahamic religions. Special attention is paid to the biblical and Qur'anic prohibitions against pork, as well as their reinterpretation in the New Testament, in which the emphasis shifts from ritual purity to spiritual and ethical integrity. The study also traces possible antecedents of these restrictions in the religious practices of Ancient Egypt, Mesopotamia, and the Hittite world, highlighting their symbolic and sociocultural dimensions. Archaeological findings are incorporated to demonstrate how dietary taboos could serve as markers of ethnocultural identity and instruments of communal differentiation. By contrast, the Armenian tradition ascribes to the pig and wild boar positive symbolic connotations of strength and vitality, as reflected in mythology, rites, and historiography. The article concludes that dietary prohibitions, while originally formulated as ritual prescriptions, were subsequently transformed into mechanisms of cultural identity and, in modern discourse, into tools of ideological and geopolitical manipulation.

